

Ի՞նչ պետք է իմանա երեխան 7 տարեկանում



Հասնելով դպրոցական տարիքին՝ երեխան ստանում է սոցիալական նոր կարգավիճակ: Սա փոքրիկ մարդու կյանքում նոր ու կարևոր փուլ է: Այդ տարիքում նա պետք է իմանա որոշ բաներ:

7 տարեկան երեխայի ֆիզիկական տվյալները.

7 տարեկանում փոխվում են նաև երեխայի ֆիզիկական տվյալները, բնավորության նոր գծեր են նկատվում.

- Միջին հասակ - 115,4 սմ-ից 126,9 սմ,
- Ուտքերի երկարությունը - տղաների մոտ՝ 34 սմ, աղջիկների մոտ՝ 32 սմ,
- Հագուստի չափս - 32/34,
- Միջին քաշ - 20,1-ից 26,5 կգ

Ի՞նչ պետք է իմանա երեխան 7 տարեկանում

Թե երեխան այդ տարիքում ինչ գիտելիքներ կունենա, կախված է նրա ընտանիքից, շրջապատից ու մեծամասամբ՝ դպրոցից: Սակայն կան հիմնական բաներ, որոնք երեխան անպայման պետք է իմանա:

- Իր անունը, ազգանունը, ծննդյան օրը, տարին ու ամիսը, երկիրը, քաղաքն ու տան հասցեն,
 - Ծնողների, մոտ հարազատների անունները, ազգանունները, ծննդյան օրերն ու մասնագիտությունները,
 - Ամիսները, շաբաթվա օրերն ու եղանակները,
 - Տնային, վայրի կենդանիներին, միջատներին, թռչուններին,
 - Բանջարեղենների, մրգերի, ծաղիկների տեսակներն ու անվանումները,
 - Հեքիաթներ, բանաստեղծություններ, երգեր,
 - Երկրաչափական մարմիններ,
 - Հաշվել մինչև տասը,
 - Մինուս և պլյուս նշաններն ու դրանց նշանակությունը,
 - Մայրենի այբուբենը,
 - Գույներն ու երանգները,
 - Աջն ու ձախը,
 - Երթևեկության կանոնները:
- Եթե երեխան չգիտի այս կետերից որոշներն, ապա պատմեք, բացատրեք, սովորեցրեք նրան:

Ի՞նչ պետք կարողանա անել 7 տարեկան երեխան

Այս տարիքի երեխան որոշ հարցերում պետք է լինի ինքնուրույն:

- Կարդալ վանկերով,
 - Պատմել կարդացած տեքստը,
 - Նախադասություններից պատմություն հորինել,
 - Տարբերել բաղաձայններն ու ձայնավորները,
 - Պետք է կարողանա ուշադիր լինել 30-40 րոպե,
 - Նկարների և առարկաների միջև տարբերությունները նկատել,
 - Մտապահել 10 նկար կամ առարկա,
 - Նկարել այնպես, որ տեսնողը հասկանա՝ ինչ է նկարված,
 - Կարողանա հավաքել խճանկարներ,
 - Կարողանա պլաստիլինից պատրաստել տարբեր առարկաներ:
- Դպրոցում երեխան շատ բան կսովորի, սակայն նրա համար ավելի հեշտ կլինի, եթե մինչև դպրոցը տիրապետի որոշ գիտելիքների:

